



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՉԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ՄԱՆԿԱԿԱՐ-  
ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌՅԽԵՆ Լ. ՏԱՐԻ

ՀԱՄԱՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՕԳՈՍՏՈՍ 1896 Թ.

## ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ՄԵՂՔԻ ԲՈՆՈՒԹԻՒՆԸ.

«Այր մի տառապեալ եմ ես, ո՛վ ապրե-  
ցուցէ զիս ի մարմնոյ աստի մահուս:  
Հոովմ. Ը. 24.»



յն օրից ի վեր, երբ մարդիկ սկը-  
սել են բարոյական օրէնք ճանաչել՝ հազիւ թէ  
մէկը բողբոջիմն ազատ մնացած լինի այն զգա-  
ցումից, օրի ամենաճանր ճնշման ներքոյ այդ-  
պէս բացականչել է Պօղոս առաքեալը: Ամեն  
օրէնք որոշ չափով ճնշումն է գործ դնում  
մարդու վերայ, իբրև իւր բնածին ազատու-  
թիւնը կաշկանդող ներկայանում նորան. բայց

օրէնքների մեծազոյն մասին զիւրութեամբ  
կարելի է ընդելանալ, սովորութեան ուժով  
նոցա զործադրութիւնը մինչև իսկ մի տեսակ  
ինքնաբերական պահանջ դարձնել. բարոյական  
գիտակցութեան մի յայտնի աստիճանի վերայ  
չատ պարտականութիւններ կատարուում են  
արդէն ինքքստինքեան և նոցա դէմ գնալն  
անտեղութիւն է համարուում. մի զողանար  
մի սպանաներ, մի սուտ վկայեր» ասած է,  
և բարոյական մարդը մտածում և վարուում  
է այդ պատուէրների համաձայն առանց ծան-  
րութիւն զգալու իւր վերայ: Կայ սակայն մար-  
դու մէջ մի բան, որ ոչ օրէնքի է հպատա-

կում և ոչ սովորութեան ոյժի առաջ տեղի տալիս. մեր մարմնից անբաժան ցանկութիւնն է այդ, որը մարդկային միջոցներով զսպելու համար ամեն ջանք ապարդիւն է համարում Պօղոս առաքեալի պէս մարդն անգամ և վերը յառաջ բերած խօսքով իւր անկարողութիւնը խոստովանում: Եւ սա սաւում է: Թէ օրէնքը ոչ միայն անգոր է մեր մարմինը ցանկութիւնից ազատելու, այլ մինչև անգամ ինքըն է զրգոող և ցանկութիւններ յառաջ բերողը. «Չցանկութիւն ոչ ճանաչելի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ, մի ցանկանայցիս»: Այդ չէ նշանակում ի հարկ է: Թէ ցանկութիւն չկայ այնտեղ, ուր օրէնքը չէ հրամայում, մենք տրամադիր ենք այդպէս ընդունելու. մենք անմեղ ենք անուանում այն վիճակը, որի մէջ մարդ դեռ չարն ու բարին իրարից չէ զանազանում գործում է ներքին զրգումների համաձայն, բայց այդ անմեղութիւնը յարաբերական անմեղութիւն է, ցանկութիւն և մեղք չձանաչել նոյնը չէ թէ չունենալ: Օրէնքը մեզ միայն գիտակցութեան է բերում, երբ նորա պատուէրների հակառակ մեր ցանկութիւնները զրգում են մեզ չարը գործելու՝ յառաջանում է մեզանում մեղաւորութեան գիտակցութիւն, որ և նոյն չափով զարգանում է և կենդանանում: Ինչ չափով մենք ենթարկում ենք օրէնքի դաստիարակիչ ազդեցութեանը: Իսկ իբրև բարոյական մարդ զարգանալու համար անհրաժեշտ է, որ մենք դաստիարակուենք օրէնքի ներքոյ, որ զարգանայ մեզանում բարոյական գիտակցութիւնը, մեղքի գիտակցութիւնը՝ ինչքան և նորա ճշունքը ծանր և զառն լինի մեզ համար:

Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակում, երբ մարդիկ այդ ճշունքն ըստ երևութիւն շատ քիչ են զգում: Քաղաքակիրթ աշխարհըն աշխատում է այնպիսի բարոյականութիւն ունենալ, որ բնական ցանկութիւններն իբրև չար ինչ չէ արգելում, որ մեղքի գոյութիւնն անգամ չէ ճանաչում: Այն մարմինը, որ Պօղոս Առաքեալը մահում մարմին էր անուանում և իբրև բոլոր տառա-

պանքներին ազդելը նկատում, որից նա այնպիսի մեծ տենչանօք ազատուել էր ցանկանում՝ մեղ համար ընդհակառակն կեանքի միակ կայարան է, զուարճութեանց և երջանկութեան միջնորդ, ուստի և առարկայ ամենաքնքեղը հոգածութեանց և փայտայանքների. մենք ցանկութիւն չունինք նորանից բաժանուելու, այլ ընդհակառակն ամեն միջոց գործ ենք դնում՝ նորան որքան կարելի է երկար պահպանելու և այդպիսով մեր զուարճութիւններն ևս աւելի տեւական դարձնելու:

Եւ սակայն խարուսիկ է այս ամենը. ըստ երևութիւն միայն մենք մեր մարմնի, նորա մէջ իշխող ցանկութեան մահացուցիչ բնաւորութիւնը չենք զգում և մեղքի բռնութեան ներքոյ ճշունքում: Արդի աշխարհը չէ կարող այլևս նախնական անմեղ վիճակին վերադառնալ, ուր բնական ձգտումներն են անարգել իշխում՝ մինչ իւր նրբացած, երբեմն ծայրայեղ անբնականութեան հասցրած զգայութիւնները բնական համարելը մեղքի ճշունք գիտակցութիւնն իրենից հեռացնել աշխատելը զարհուրելի հետեւանքներ է յառաջ բերում: Որքան դերագասելի է մի հասարակ բանուորի կրկնագործի փայտահատի կեանքը, որ քրտնաջան աշխատութեամբ բնութեան դէմ կռիւ մղելով իւր օրական ապրուստն է հոգում՝ մեղկութեան ճահճի վերայ պառկած մի ծոյլի կեանքից, նոյնքան դերագասելի է հոգեկան այն տաժանելի վիճակը, որի մէջ բարոյական վտեմ պատուէրը կատարելու համար կռիւ է մղում մարդ անդադար իւր ցանկութիւնների, իւր մարմնի, մեղքի դէմ՝ այն եզկելի վիճակից, ուր նա անձնատուր իւր կրքերին և ինքնախաբէութեամբ արբեցած, քայքայում է օրէցօր հոգեպէս ու մարմնապէս և դէպի գերեզման զիմում: Մեր ժամանակի համար չկայ և զուցէ աւելի ցուալի մի երևոյթ քան այն, որ հասարակաց կարծիքը գրականութիւնն, ամեն ինչ նպաստում է այս վերջին կարգի սերունդ սնուցանելու և զարգացնելու: Երբ հետ զուգրնթացաբար աճում և զարգանում է մեղքը, որ ոչինչ

խորուօրի միջոցներով ծածկել կարելի չէ. իբրև հազարգլխեան մի վիշապ ամեն կողմից պարզում է սա իւր խեղդող ճանկերն ու որս որոնում և ներկայ սերունդը փոխանակ վտանգի մերձաւորութիւնը տեսնելու, փոխանակ Պօղոս առաքեալի նման ստրտափահար՝ օգնութիւնս ազատարար կանչելու: մահատիժ վիշապի թովիչ աղղեցութեանն է երթարիւում ու զուեղազուեղ նորա զիրկը զիմում: Դսկ եթէ կան առաջնակարգ անձնաւորութիւններ, որոնց տրուած է ժամանակի ոգին ըմբռնել, զգալ իրենց կաշու վերայ բոլոր մարդկութեան տանջող ցաւերը և ամենքին մատչելի մտքեր սասանեցնող կերպով վերարտադրել իրենց ըմբռնածն ու զգացածը, ներկայացնել ապականուած աշխարհն իւր բոլոր տղեղութեամբ, մեղքի ծանր ու զազրալի հետեւանքներով նոքա ևս միայն չարիքն են տեսնում բայց բռնալու միջոցը չլիտեն. Առաքեալի նման բարոյական օրէնքի խտտութիւնն ու իրաւացիութիւնը ճանաչելով իսկ՝ հեռու են դեռ այն երանական զգացումից, որ նա ունէր մեղսամած խաւարն ու ամեն տազնապ փարատող լուսոյ մի փարոս աչքի առաջ տեսնելով և կարողանալով մեղքի բռնութիւնը խորտակող մի երկնային զօրութիւն ցոյց տալ՝ «Շնորհքն Աստուծոյ ի ձեռն Եփեսոսի Զրիստոսի Տեառն մերոյ»:

Վերջին խօսքերի իմաստն արդէն բոլորովին անհասկանալի է ժամանակակից մարդու համար, աւելի անհասկանալի քան մեղքի գրոյցը: Պէտք է մէկը Պօղոս առաքեալի պէս ամբողջ կեանքում կոխ վարած լինի իւր մարմնի, իւր ցանկութեանց դէմ, բարոյականութեան անպայման հրամանը բոլոր խտտութեամբ ըմբռնած և աստուածագիր պատուիրանները մի առ մի կատարելու ձգտած լինի՝ որպէս զի Աստուծոյ առատ ձրի մեղսաքաւիչ շնորհաց զօրութիւնը ճանաչել և զնահատել կարողանայ: Մեր ամենօրեայ փորձառութիւնը մեզ ասում է, որ պատուէրներ, խրատներ տալով, բարոյականութեան կանոններ սովորեցնելով կարելի չէ մէկին բարոյական մարդ դարձ-

նել. անձնական օրինակը միայն, բարոյական հասարակութեան, բարոյական անձանց անմիջական աղղեցութիւնը սերունդ է կրթում, բարոյական շաղի վերայ դնում: Սակայն ուր է այն մարդը, որ կատարեալ բարոյականութեան ախպար հանդիսանար մեր առաջ, դէպի որը բարձրանալը և որին հասնելը կարելի լինէր մեր կեանքի համար անպայման կետ նպատակի դարձնել. պատմութիւնը միայն մէկին է ճանաչում այդպէս. կնոջ զաւակներին մէկը միայն համարձակուել է իւր համար ասել. «Ո՞րք ի ձէնջ յանդիմանեցէ զիս վան մեղաց», և Առաքեալը դէպի Շա է մատնացոյց անում՝ միակ անմեղը բարոյական բարձրագոյն զիտակցութեամբ հանդերձ, միջնորդն ու պարկեւիչն աստուածային շնորհաց: Օրէնքը պատուիրում է մեզ բարին անել և սովորեցնում է խուսափել չարից, բայց չէ կարող մեզ այն զօրութիւնը պարգեւել որ մեր մարմնի մէջ իշխող ցանկութիւններին յաղթէ և ստիպէ մեզ բարոյական կեանք վարել. իբրև դրսից եկած պատուէր մեր ներսը զործող տարրերի վերայ նա ոյժ չունի և հետեւանքն այն է, որ մենք իմանալով հանդերձ, թէ օրէնքը բարի է և հոգեօր հնազանդել նորան և բարին դործել չենք կարողանում: «Զի կամքն առաջի կան ինձ և տունել դրարին ոչ»: «Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն, բայց տեսնեմ այլ օրէնս յանդամս իմ: Այլ գերութիւնից, մեր անդամների մէջ տիրապետող մեղքի այդ բռնաւոր օրէնքից ազատուելու համար՝ Առաքեալը միակ միջոց այն է համարում որ մեր ներսը, մեր անդամների վերայ իսկ մի նոր օրէնք սկսէ իշխել՝ մի հոգեօր, բարոյական օրէնք: Շա ինքն իրեն և իւր հետ մէկտեղ բոլոր ճշմարիտ քրիստոնեաներին, համարում է արդէն այդ օրէնքի ներքոյ. «Զի օրէնք հոգւոյն կենաց ի Զրիստոս Եփեսոս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու», ուստի և եզրակացնում է. «Դսկ եթէ Զրիս-

տոս ի ձեզ է: ապա մարմին մեռեալ է վասն մեղաց: և հոգին կենդանի է վասն արդարութեան: Զրիտոսն էի համար մի տնհասանելի գաղափար չէ ուրեմն այնպիսի կեանքով ապրելը ուր միայն հոգին է դործում: ստիպում մարմնին մեռցնել իւր ցանկութիւնները և իրեն համակերպել: այդ նորա կոչումին է: Զանի մենք կշարունակենք դեռ մարմնով ապրել: մարմնի հաճոյքները կատարել և նոցա մէջ բաւականութիւն ու երջանկութիւն որոնել՝ մեղքի և մահու օրէնքը կտրել մեր վերայ և գերի կպահէ մեզ կամենանք ճանաչել նորա իշխանութիւնը թէ ոչ: Նիւթապաշտական հայեացքների հետ պղտոր կոհակներով մեղքի հոսանքը սղողում է մեր աշխարհը և պայթում: զլուելի ուսուցչների միջից ցոյց է ապլիս իւր բոլոր օգեղութիւնը: մի հովասուն զեփու: մի երկնային շունչ միայն նորա կատարութիւնը նստեցնել և նորա բացած վերքերը բուժել կարող է: Որպէս զի մարմինը իւր գործը միայն կատարէ և իւր համար դրած սահմանից չենէ: հարկաւոր է որ հոգին մեր մէջ դերիշխանութիւն ստանայ: որ մենք հոգևոր: գաղափարական մթնոլորտի մէջ վերսկսինք ապրել: հոգեով ապրել: Զրիտոսի հոգեով ուշադիր Առաքելի ազդարար ձայնին և թախանձազին հրաւիրանաց: «Այսուհետև» եղբարք: պարտե՛ք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ:»

Կ. Վ.



Հ Ա Բ Ե Շ Ն Ե Ի Ի Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն .

ՆՈՐԱ ՆԵՐԿԵՍ ՎԻՃԱԿԸ .

( Ե Թ Բ Ո Ւ Ն Կ Ե Ս Թ Ի Ե Ն ) .

Հարեչական եկեղեցին) ինչպէս արդէն ասուեցաւ: ազգային եկեղեցի է: — Բացի Հարեչ հրեաներից կամ Փայլաներից: բացի արևելեան սահմանների վերայ ապրող մահմեդականներից և Գալլայի (հարաւային կողմում) հեթանոս մնացած մասից: բոլոր Հարեչները քրիստոնեայ են: Որքան է Հարեչ քրիստոնեաների թիւը՝ դժուար է ասել: Յա-

ճախ յիշուում է: որ Հարեչստանը 3—4 միլիոն բնակիչ ունի: բայց 14 տարի առաջ այսպէս էր զգուում Ռօլֆս. Երբ ես յետոյ հոգեով տեղափոխուում էի Հարեչստան և մտածում էի: թէ ինչպէս որ օրի վերայ: ընդարձակ տարածութիւններ անցնելով: ոչ գիւղ և ոչ մարդիկ էի տեսնում: գալիս էի այն համոզման: թէ Հարեչստանը չունի այնքան մեծ թուով բնակիչներ: որքան վերագրում են նորան: Այն էլ շատ է ըստ իս: եթէ նոցա ընդհանուր գումարը 1,500,000 հոգի հաշուենք: Գուցէ առաջ նա բազմաթիւ բնակչութիւն է ունեցել և հաւանականորար դեռևս կունենայ: Հարեչները: ինչպէս երևում է: աճող ժողովուրդ են: 5—6 երեխայ ունեցող ամուսիններ բաւական շատ կան...: Ենքնասպանութիւնները խիստ հազուադէպ են այստեղ և կլիման բոլորովին առողջարար է: որովհետև անառողջ խոր ընկած հովիտները գրեթէ անբնակ են: Երկրի հարստութիւնը բնակիչների մեծ թիւ կարող է կերակրել: բայց կան զանազան հանգամանքներ: որոնք բացատրում են Հարեչստանի այսպիսի անօտր բնակչութիւնը: Երկրի մէջ գոյութիւն ունեցող յարատև պատերազմը խլում է այս երկրից բազմաթիւ մարդկանց իրենց կեանքի ծաղիկ հասակում: Թէպէտ բոլոր զինուորները ամուսնացած են: բայց երկնաների՝ մասը բնական մահով չէ մեռնում...: Յաճախ նաև վարակիչ հիւանդութիւնները ամբողջ գիւղեր և նահանգներ ամայի են դարձնում:»

Հարեչական եկեղեցու ազգային եկեղեցական բնաւորութեան հակասողն է սուսնձնապէս այն հանգամանքը: որ աբու Նան միշտ Ղ. պտի պէտք է լինի: որի թոյլտուութեան համար առաջ (այժմ ինչպէս է՝ չգիտեմ) եգիպտական փոխարքաներին իւրաքանչիւր նոր ընտրութեան ժամանակ բաւական մեծաքանակ հարկ պէտք է վճարուէր: Այս օտար տարրի ազդեցութիւնը չէզոքանում է ոչ միայն նրանով: որ արունան Հարեչստանում միայն Հարեչների մէջ ապրելով: սովորաբար շուտով Հարեչ է դառնում: այլ աւելի նրանով: որ այս ազգային եկեղեցու մէջ թագաւորը նաև եկեղեցու վերայ ունի շատ զօրեղ ազդեցութիւն: Միջին դարերում Չարա Յակոբ թագաւորը ձեռնարկեց ինքնազուլու եկեղեցական կարգերի մի նոր բարեփոխութեան. իսկ իւր՝ Անգլիացուց հետ ունեցած պատերազմներով (1868) յայտնի Թէոդորոս թագաւորը: որ ինքնասպանութիւն գործեց իւր Մարգալա բերդում (1868 ապր. 13): մինչ պաշարող Անգլիացիք նեղում էին՝ աչքի ընկնող կերպով ցոյց է տուել իւր զօրութիւնը արունայի դէմ: Արունան հրապարակական ժողովի առաջ նորան նշովելով իշխանազուրկ յայտարարեց. այն ժամանակ

• ՏԵՄ. Թ. Ը. ԵՐ. 299: